

Չարց «Չեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼՂՅ օրենքին համաձայն, հեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) ընդհանուր եթերաժամի քանի՞ տոկոսը պետք է կազմի:

Պատասխան Չեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) չի կարող ընդհանուր եթերաժամի 65 տոկոսից պակաս լինել, ընդ որում, սուբյոթարգմանությամբ հեռուստահաղորդումները հաշվարկվում են կրկնակի ժամաքանակով և չեն կարող հայրենական արտադրության հեռուստահաղորդումների եթերաժամի 5 տոկոսից ավելի լինել, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ: